

սունների գոմերը, որից և ստացել է այս գիւղը իւր անունը: Գառականում է Սեանայ վանքին: Ուշագրութեան արժանի ոչինչ չկայ գիւղում. լեռան վերայ կայ մի ուխտատեղի ս. Խաչ անուանով: Բնակիչները հայեր են, Մակուի Զանգեզոր և Տանալուա գիւղերից զաղթած 1830 թ. Ընդամենը 82 տուն, 308 ար. 267 իգ. միասին՝ 575 հոգի: Գարապունքը նոյնն է: Հողը դեռ ևս կանոնաւոր կերպով չափուած և ցուցակագրուած չէ. համարում է ընդամենը 1018 դեփատին:

Գ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԳԱԼԻ-ՂԱՐԴԱՇԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ղըշլաղ. (62°49'40"—40°21'5").— Գտնւում է Նոր-Բայազէտից դէպի արեւելք, հազիւ 3 կիլոմետր հեռու և բռնում է 20 դես. 1500 ք. ս. տարածութիւն: Երեք կողմից պատած է փոքրիկ բարձրութիւններով, իսկ արեւմտեան կողմում տարածւում է մի դաշտավայր, որի միջով ոլորապտոյտ հոսում է Գաւառագետը, մի հիւսնայի տեսարան ընծայելով գիւղին: Արեւմտեան բարձրութեան վրայ նկատելի են մի հինաւուրց ամրոցի հետքեր, որի մասին ոչ մի աւանդութիւն կամ յիշատակութիւն չկայ. տեղացիները Քարաբերդ են կոչում նրան: Այստեղ, ժայռի կրճերն կայ մի արձանագրութիւն, սակայն բոլորովին եղծուած է: Շատ նշանաւոր է գետի ձախ ափին, հին կամրջի մօտ կանգնած խաչքարերից մինի արձանագրութիւնը, որից երևում է, որ այս տեղում հնումը եղել է Երծրաբար գիւղը: Ահա այդ արձանագրութիւնը.

Կամաւն Աստուծոյ ես Տիլիջան որդի տէր Մաթէոսին՝ Թոռն Ովանէսին, և որդիքս իմ Աբրիհամն, Լուսմաքոսն և հանգուցեալ որդիքս իմ Սարգիսն և Փիւհամզէն, և կողակիցն իմ Սիրմայ խաթուն, մեք եկինք Գաւառէն, շինեցինք Արծիւաքարս, կապեցինք կարմունջս, կանգնեցինք խաչս. թվ. ՋՂԳ (=1544):

Ով առիւծ մահ առեր զու գիս

Գերեալ եղեր ներքոյ վիմիս,

Զարչարեցայ ես Գաւառիս,

Փող մին չունիմ, պահեմ առ իս:

Այս խաչքարի մօտ կանգնած մի ուրիշ խաչքարի վրայ.

Կամաւն Այ. Ես Տիլիճան շինեցի Արծիւաքարս, գնեցի Գ. ըստակ մուլքս պարոն Շահղուէն որդի պարոն Սահաթեկին էլառայ չաղացաձորու Զ. ըստակ մուլքն պարոն Դամայ Սուլթանէն դուստր պարոն պապին:

Գիւղի մէջ առանձին ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, միակ եկեղեցին չափազանց անշուք է, փողոցները ծուռն ու մուռ, տները մեծ մասամբ հին ձևի, թէև կան մի քանի գեղեցիկ և նոյն իսկ երկյարկանի տներ: Նոյն իսկ աղբիւրները բաւականաչափ չկան, այլ միայն մինը, այն էլ գիւղի արևելեան ծայրում:

Բնակիչները գաղթել են Բայազէտի Բարաքեմթ, Կարմիր-կոնտ, Գիւլասար, Նորաշէն, Արծափ գիւղերից, 4 տուն էլ Մշուկողմից: Ընդամէնը 207 տուն են, 935 ար. 799 իգ. միասին 1634 հոգի: Այս գիւղացիները հռչակուած են որպէս լաւ մշակներ և շարունակ մշակութիւն են անում Նոր-Բայազէտ քաղաքում: Շատերն էլ նոյն նպատակով պանդխտում են: Գլխաւորապէս պարագում են երկրագործութեամբ. ունին 1325 դ. 1824 թ. ս. համայնական վարելահող: Անասնապահութիւնն այնքան էլ զարգացած չէ, որովհետև թէպէտ 680 դես. 200 թ. ս. արօտատեղի ունին, սակայն խոտատեղին շատ քիչ է, ընդամէնը 17 դես. 696 թ. ստէն: Այս գիւղացիներն էլ նաւակներ են բանեցնում և ձկնորսութեամբ պարագում:

Ղըշլաղի վարելահողերը մեծ մասամբ տարածւում են նրա արևելեան կողմում, ուր ձգւում է Մանիչար հովիտը, տարածուելով մինչև լճափը: Սա մի ընդարձակ հովիտ է, որ ձգւում է մինչև Դալի-Ղարգաշ գիւղը. շատ էլ պարարտ է: Այստեղ կատարուած պեղումները վկայում են, որ ամենահին ժամանակներում էլ այս հովիտը բնակուած է եղել մարդկանց բնակութեամբ: Տեղական մի աւանդութիւն ասում է, թէ այս հովիտը իւր անունն ստացել է Մեկիք Մանուշարից, որը այն աստիճան հարուստ է եղել, որ կարողացել է շահի զօրքերին մի քանի օր կերակրել: Նրա գերեզմանը ցոյց են տալիս այս հովիտում, մի բլրակի վրայ, որի մօտ ես պեղումներ եմ կատարել: Սա մի ահագին քար է, 3 մետր երկարութեան. 1½ մետր լայնութեան և 70 ս. հաստութեան: Քարը շրջած էր և գերեզմանը փորուած՝ զանազան նպատակով: Մշակներս ինձ ասում էին, թէ քարի առաջին երեսում գրուած է, թէ ես արտերս ձէթով ջրեցի ու կնոջս արծաթէ պայտով քօշ հագցրի, դարձեալ աշխարհի համը չտեսայ, դուք ինչ պիտի տեսնէք: Ես շրջել տուի քարը, սակայն ոչ մի տառ չնկատեցի վերան:

Այս գեղեցիկ հովտում կան չորս գիւղատեղիներ: Սրանցից հիւսիսայինը կոչւում է Մանիչարի Դուռակներ, այսինքն ձմեռը ոչխարներ պահելու տեղ: Այստեղ, լճի անմիջապէս ափին կայ սրբատաշ քարով շինուած փոքրիկ մատուռ, որի արեւելեան պատի վրայ արձանագրուած է.

Ի թուականութեանս Հայոց ՈԶ (=1231) յիշխանութեան Իւանէի և Աւագի, ես Մինայս գնեցի զագարակս և շինեցի գեղեղեցիս և Մագսուտ ամուսին իմ, յիշատակ մեզ և ծնաւդաց մերոց: Զատկին երկու ար ժամ...

Մատրան շուրջը կան մի քանի խաչքարեր, որոնցից մի քանիսի վրայ արձանագրուած է.

Ես Քիշմիրս կանգնեցի սուրբ խաչս բարեխոս Գեօքչուին, թվին ՌՃԾ (=1701).

Այս է հանգիստ Սահակին թվ. ՌՃԾԴ (=1705).

Մի խաչքարի վրայ էլ կար ԶԶԱ (=1532) թուականը:

Այս գիւղատեղում նկատելի է մի եկեղեցու եօթը ձիթահանքի և բաւականաչափ տների հետքեր:

Երկրորդ կամ հարաւային գիւղատեղում էլ կայ նոյնպիսի մի փոքրիկ մատուռ, որի վրայի արձանագրութիւնը եղծուած է: Գիւղացիներն այս մատրանը Արծուանդիչ են կոչում:

Նրբորդ գիւղատեղին կոչւում է ս. Գէորգ, որովհետեւ այս անուամբ մի աւերակ եկեղեցի կայ այստեղ: Կան տնատեղեր և խաչարձաններ, առանց տապանագրերի:

Չորրորդ գիւղատեղին այժմ կոչւում է Ղուռու-խարապա, այսինքն Յամաք-աւերակ: Այսպէս կոչուելու պատճառն այն է, որ Բաշ-քեանտ գիւղից իջնող առուակը, որ երբեմն խմելու ջուր է մատակարարել, այժմ չորացել է: Գիւղը տեղաւորուած է եղել լճի ափին, և բաւական գեղեցիկ գիրք է ունեցել: Այժմ մնում են սրբատաշ քարով շինուած մի եկեղեցու կիսակործան պաւերը և նրա շուրջը տարածուող գերեզմանատան մէջ կանգնած բաւական խաչքարեր, որոնցից մի քանիսի վրայ կան հետեւեալ տապանագրերը.

Հանգիստ Իգնատիոսին, որ փոխեցաւ ի Քրիստոս թվ. ԶԶԴ (=1535):

Այս է հանգիստ Սարգիս աղին, որ է որդի Ամիր աղին. թվին Ռ. (=1551).

Այս է հանգիստ Աղազարին,

Որ է որդի Ամիր աղին,

Ամաց էր սա երեսունին,
Հանգեաւ ի Քրիստոս կուսի տարին

Ձ հայոց թվին

ՂԵ. աւելորդին ¹⁾. (=1546).

Սուրբ խաչս բարեխաւս է Ամիր աղին. թվին ՌԽԴ
(=1595).

Սուրբ խաչս բարեխաւս է համամչի Զազին. թվին
ՌԽԴ (=1595).

Ես Աւանէս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ
հաւրն իմոյ Թադէոսին և մաւրն իմոյ Նարին Գիւլին թվ.
Ռ (=1551):

Եկեղեցու վրայ ոչ մի արձանագրութիւն չկայ, միայն նրա
մէջ կանգնած մի գեղեցիկ խաչքարի վրայ նկատելի է ԶԶԶ
(=1337) թուականը:

Ղուլալի. (62° 48'30"—40° 19'37").—Տեղաւորուած է համա-
նուն առուակի ձախ ափին. բռնում է 27 դես. 600 ք. սաժէն
տեղ, որից 24 դեսեատինը շինութիւնների տակ է: Գտնուելով
Նոր-Բայազէտ քաղաքին մօտ՝ կարող է մօտիկ ապագայում միա-
նալ նրա հետ: Գիւղում կան մի երկու լայն փողոցներ. տների
մեծագոյն մասը՝ զլիսատուն է, նոր նոր շինում են և սենեակներ,
սրանց առաջ՝ պարտէզներ: Գիւղում կայ մի անշուք եկեղեցի, որի
կամարակապ սեղանը հին է, մնացածը յետոյ վերանորոգուած:
Նուիրուած է ս. Աստուածածնի անուան, ուստի և սրա տօնին
հազգին բազմութիւն, մանաւանդ Նոր-Բայազէտից, ուխտ է գա-
լիս: Եկեղեցու այս կամարի հիման վրայ արձանագրուած է.

Շնորհօքն Քրիստոսի շինեցաւ սուրբ տաճարս թվին
ՌՃԻԳ (=1674), ես տանուտէր Գասպարս և քահանայքս
և ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ տաճարս. յիշատակ
հոգւոց մերոց:

Գիւղի հիւսիսային կողմումն էլ կայ մի կիսուեր եկեղեցի,
որի շուրջը կան խաչքարեր, սրանցից երկուսի վրայ արձանա-
գրուած է.

Այս գայիսոն և նիզակ է ներկեալ արեամբն կենա-
րարին Յիսուսի, որ կանգնեցաւ ձեռամբ Արարչա՜ն Աղա-
յին, ի փրկութիւն հոգոյ Գրիգոր եպիսկոպոսին:

¹ Այսինքն երբ տարուայ տանուտէրը կոյսն էր:

Սուրբ խաչս բարեխաւս Մելիք Աղային և իւր ծնողացն. թվ. 272. (=1549) Մէլիքսէթ կազմող:

Տապանաքարերի վրայ.

Այս է հանգիստ Յովսէփին. թվ. 223 (=1523).

Այս է հանգիստ Ոսկանին թվ. ՌՃՄ (=1701):

Գիւղում կան նաև մի քանի մատուռներ, այսպէս՝ հարաւային կողմում Ե. Վահան անունով, որի արևմտեան պատի վրայ գրուած է.

Ի թվ. 207 (=1505), ես Մաթոս քահանայս կանգնեցի զխաչս բարեխոս. յիշեցէք ի Գրիստոս:

Միւս մատուռներն են՝ Ս. Վարվառէի, Բըղտէի և Թուխ Մանուկի:

Թէ եկեղեցիների, թէ մատուռների և թէ գիւղի չորս կողմը կան բաւականաչափ խաչքարեր և քառանկիւնի տապանաքարեր, որոնց տապանաքրերից մի քանիսը հետեւեալներն են.

Ս. Վահանի մատրան մօտի մի խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Յակոբի որդի Պալին թվ. 20 (=1460).

Սրա մօտ՝ մի ուրիշ փոքրիկ խաչի վրայ.

Ի թվ. 207 (=1505). Ես Փիրհամգէի եղբայր. Յոսապէս կանգնեցի զխաչս բարեխաւս իշխանին:

Աւերակ եկեղեցու մօտ՝

Սուրբ խաչս բարեխաւս Մէլիք Աղային և իւր ծնողացն թվ. 272. (=1549). Մէլիքսէթ կազմող:

Հարաւային գերեզմանատան մօտ.

Ես Աւանէս կանգնեցի զխաչս հոգոյն Ղասուրին. թվ. Ռ7 (=1555):

Սրա մօտ՝

Սուրբ խաչս բարեխաւս է Ուղուրին. Գիրամ կազմող թվ. ՌՄԸ (=1602):

Եկեղեցու մօտի գերեզմանատան միջի խաչքարերի վրայ.

ՌՄ7. (=1605) Փիրհամգէս տանուտէր գոլով... տանս Գեղամայ ետու կազմել տապանս և նկարել զխաչս, որք կարգայք, յիշեցէք: Ես Գրիգոր եպիսկոպոս նկարեցի զխաչս ի խնդրոյ Փիրհամգին ի փրկութիւն հոգո որդոյ իւրոյ Զարհապին:

Բնակիչները Հին-Բայազէտից են, 270 տուն, 1116 ար-

1032 իգ. ի միասին 2148 հոգի: Պարապուս են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1519 գետնատին վարելահող և 1368 դ. 700 ք. ս. արօտատեղի:

Դալի-Ղարաղալ.— (62°47'45"—40°17'30").—Փռուած է մի մեծ դաշտավայրի վրայ և հարուստ է սառնորակ աղբիւրներով, որոնք միանալով խառնուում են Ղուլալուի աղբիւրների ջրին և կազմում Գեօքչայ գետակը: Շնորհիւ այն հանգամանքի, որ գիւղը բռնուած է 63 գետնատին 1440 ք. սաժէն տեղ և միայն 50 դ. 960 ք. սաժէն է շինութիւնների տակ, տները միմեանց վրայ կուտակուած չեն. կան բաւական լայն փողոցներ, ընդարձակ բակեր և նոյն իսկ մի քանի պարտէզներ՝ տների առաջ: Այս պատճառով և բաւական լաւ տպաւորութիւն է թողնում: Գիւղը բաժանուած է երկու թաղի՝ Զանգեզուրցոց և Սուրբ Օհանցոց, իւրաքանչիւր թաղում կայ մի եկեղեցի, երկուսի մէջ տեղում պետական միդասեան դպրոց և շինական դատարան: Գիւղի արևելեան կողմում մի բլրակի վրայ կայ մի գիւղատեղի և մի փոքրիկ մատուռ Վարդկավանք՝ անունով, որովհետև ծաղիկ հիւանդութիւնից բժշկուելու համար այդտեղ են ուխտ գնում: Արևմտեան կողմում էլ կայ մի ուրիշ գիւղատեղի՝ մի մատուռով, որ յայտնի է Վիմոյի սուրբ անունով: Թուխ-Մանուկ անունով մի ուրիշ մատուռ էլ լրացնում է այստեղի քրիստոնէական յիշատակարանների թիւը: Ընդարձակ գերեզմանատանը, որ բռնուած է 1 դ. 1200 ք. սաժէն, կան նաև բաւականաչափ հին խաչքարեր՝ որոնց վրայ եղած տապանագրերից ուշագրաւ են հետեւեալները.

1) Սուրբ խաչս բարեխոս է Մէլիք Մալխասին թվ. ՌՃԽԸ (=1709).

2) Սուրբ խաչս բարեխոս է Մէլիք Մանուշարին թվ. ՌՃԿԲ (=1713).

Բնակիչները Հին-Բայազէտի Զանգեզուր և Սուրբ Օհան գիւղերից են, առանձին թաղերում հաստատուած: Ընդամենը 404 տուն են. 1896 ար. 1752 իգ. ի միասին՝ 3648 հոգի: Պարապուս են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 2268 դեա. 720 ք. սաժէն վարելահող և 1752 դ. 1880 արօտատեղի: Գիւղացիների մէջ շատ տարածուած է ներկարարութեան արհեստը և 70-ից աւելի այսպիսի արհեստաւորներ գնում են Թիֆլիս և այլ տեղեր՝ իրենց արհեստով պարապելու:

Քիւզածըլ.— (62° 48' 20"—40° 16' 20").—Սեղմուած է մի դոգաւորութեան մէջ և բռնուած է 22 դ. 830 ք. սաժէն տարածու-

թիւն: Արեւելեան կողմում բարձրացող լեռան վրայ կայ մի հինաւուրց ամրոց: Սարի արեւելահայեաց երեսը, որ բաւական թեք է և մատչելի՝ երեք շարք համակենտրոն պարիսպներով պատած է, իսկ արեւմտեան կողմը, որ ուղղահայեաց է՝ պաշտպանուած է միայն մի պարսպով: Այս կողմում կայ մի բաւական երկար ստորերկրեայ անցք: Արեւելեան կողմը, ամրոցից դուրս, կան արհեստական բարայրեր:

Ամրոցից փոքր ինչ արեւմուտք, նոյն լեռան լանջին կայ մի փոքրիկ վանք, սրբատաշ քարով շինուած, անսիւն, գմբեթազարդ: Սա Պառաւի կամ Եկայ և կամ Զահրայ վանք է կոչւում, որովհետեւ աւանդութեան ասելով մի պառաւ է շինել՝ իլիկի և ջահրի վաստակով: Ոչ մի արձանագրութիւն չկայ: Աւանդութիւնը մատնանիշ է անուս նաեւ այդ պառաւի գերեզմանը, իւր վանքի հարաւային կողմում:

Գիւղի հարաւ-արեւմտեան կողմում էլ կայ մի գիւղատեղի, ուր դեռ ևս մնում են մի եկեղեցու աւերակները և շուրջը՝ գերեզմանաքարեր:

Գիւղի մէջ կան մի նոր և մի հին եկեղեցի, ինչպէս և մի ուխտաանգի՝ Թուխ-Մանուկ անունով: Գիւղի ստորոտով հոսում է մի առուակ, որ ամառները շատ անգամ ցամաքում է. և որովհետեւ գիւղում աղբիւրներ չկան, գիւղացիները մեծ նեղութիւններ են կրում, մօտակայ Դալիդարդաշ գիւղից ջուր կրելով:

Բնակիչները Հին Բայազէտի Ջանգեզուր գիւղից են. 152 տուն. 685 ար. 622 իգ. ի միասին 1307 հոգի: Պարսպում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1320 դես. 2392 ք. սաթէն վարելահող և 765 դես. 1558 ք. ս. արօտատեղի: Այս գիւղից դէպի Բաթում և Բագու պանդխտողների թիւը բաւական մեծ է:

Բաշ-Քեանտ—(620 48' 50"—400 15' 25") Տեղաւորուած է համանուն լեռան լանջին և բռնում է 13 դ. 240 ք. ս. տարածութիւն, որից 9 դ. 1200 ք. ս. է շինութիւններով ծածկուած: Ուղղուած լինելով դէպի լիճը, շատ գեղեցիկ տեսարան ունի: Բաժանուած է երկու թաղի, հայկական և թրքական. հայկականում կայ մի հին եկեղեցի ս. Գէորգ անունով և մի փոքրիկ մատուռ՝ ս. Ստեփանոսի:

Հայերը գաղթել են Ալաշկերտի գիւղերից, ընդամենը 82 տուն են, 304 ար. 272 իգ. ի միասին 576 հոգի: Թուրքերը 54 տուն են, 173 ար. 166 իգ. միասին 339 հոգի. 4 տուն էլ քրդեր կան. 20 ար. 14 իգ. ընդամենը՝ 140 տուն, 497 ար. 492 իգ. միասին 989 հոգի:

Թէ հայերը և թէ թուրքերը պարագլուխ են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1207 զ. 1344 զ. սաթէն վարելահող, և 1399 զ. 1330 զ. ս. արօտատեղի: Գոյումաւ է այստեղի իւղը:

ԳԵՕԼԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երանոս.—(62° 51'—40° 12' 25").—Փռուած է մի փոքրիկ զառիվայրի վրայ, համանուն առուակի եզրին, իւր առաջ ունենալով գեղածիծաղ Սևանայ լիճը: Բնութեւն է 42 դաս. 576 զ. ս. տարածութիւն, որից միայն 34 զ. 1344 զ. ս. է շինութիւններով ծածկուած: Հնումը այս գիւղը կոչուել է Չազ, այդ ժամանակներից Թաւրիս են մի երկու խաչքար, որոնց վրայ կան հետեւեալ տապանագրերը.

Աստուածածին եկեղեցու բեմի վրայ գործադրուած խաչքարի.—

ԹՎԻՆ ՈՒԴԻ (=1215), ի հայրապետութեան Տեառն Սարգսի Սիւնեաց եպիսկոպոսի ես Յակոբս կանգնեցի զխաչս ծնողի իմոյ Պաշիկին. յիշեցէք:

Գիւղի վերեւի հանգստարանի մի խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Ամիրադին թՎ. ԶԶԵ (=1536).

Նոյն տեղի մի ուրիշ խաչքարի վրայ.

Ես Սարգիս կանգնեցի զխաչս հաւրն իմ Բէգլարին, յիշեցէք ի Քրիստոս. թՎ. ՌԼ. (=1581).

Ս. Աստուածածին եկեղեցու դաւթի խաչարձանի վրայ.

Ասլան աղէս կանգնեցի խաչս. թՎ. ՌԻԴ. (=1575):

Գիւղի արեւմտեան կողմը, լեռան զազաթին գանոււմ է Սալ կոտի անապատը, որ այժմ ս. Թոգաննէս անունով մեծ ուխտատեղի է համարուում: Սրանից փոքր ինչ բարձր կայ ս. Սոփիա անունով մի ուրիշ մատուռ էլ: Ժողովուրդը հաւատում է թէ այս երկու մատուռներում քոյր ու եղբայր նահատակներ են անփոփուած:

Բնակիչները Ալաշկերտի գիւղերից են, 239 տուն, 1185 ար. 1032 իգ. ի միասին՝ 2217 հոգի:

Պարագլուխ են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 1452 դ. 848 զ. ս. վարելահող, և 1671 զ. 864 զ. ս. արօտատեղի: Գիւղի լճափում ձկնորսութեամբ պաշարակու իրաւունքը գիւղացիներին է պատկանում:

Գիւղի հանդէպ, հազիւ 2 կիլոմետր հեռու, լճափին, մի